ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ՊԱՐՈՆ Ռ. Կ. ՌՈՒԲԻՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ռուբինյան,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածը և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածը՝ Ձեզ եմ ներկայացնում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Օրենքի նախագծին կից ներկայացվում են օրենքի ընդունման հիմնավորումը և գործող օրենքի փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքը:

Միաժամանակ հայտնում եմ, որ նշված օրենքի նախագիծը Ազգային ժողովում քննարկելիս որպես օրենսդրական նախաձեռնության հեղինակ և հիմնական զեկուցող հանդես եմ գալու ես՝ Արամ Վարդևանյանս:

Խնդրում եմ նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԱՐԱՄ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ

13.10.2026թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի «1 օրը հաշվելով 1 օրվա դիմաց,» բառերը փոխարինել «1 օրը հաշվելով 2 օրվա դիմաց,» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

(Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու վերաբերյալ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2021 թվականի մայիսի 5-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 79. Պատժի ժամկետները հաշվարկելը և պատիժը հաշվակցելը

1. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու, զինվորական ծառայության մեջ սահմանափակման, ազատության սահմանափակման, կարգապահական գումարտակում պահելու, ազատազրկման ժամկետները հաշվարկվում են ամիսներով և տարիներով: Հանրային աշխատանքների ժամկետը հաշվարկվում է ժամերով: Կարճաժամկետ ազատազրկման ժամկետը հաշվարկվում է օրերով և ամիսներով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված պատիժները փոխարինելիս կամ գումարելիս, ինչպես նաև պատիժը հաշվակցելիս ժամկետները կարող են հաշվարկվել օրերով:

3. Մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, անկախ Հայաստանի Հանրապետության իրավազորությունից, փաստացի անազատության մեջ գտնվելու ժամկետը հաշվակցվում է կարճաժամկետ ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու, ազատազրկման ձևով նշանակված պատժին՝ 1 օրը հաշվելով 2 օրվա դիմաց, ազատության սահմանափակման ձևով

նշանակված պատժին՝ 1 օրը հաշվելով 2 օրվա դիմաց, իսկ հանրային աշխատանքների դեպքում՝ 1 օրը 8 ժամի դիմաց:

4. Անազատության մեջ գտնվող անձի նկատմամբ տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, զինվորական ծառայության մեջ սահմանափակման ձևով հիմնական պատիժ նշանակելիս դատարանը, հաշվի առնելով մինչև դատավճիռ կայացնելը, անկախ Հայաստանի Հանրապետության իրավազորությունից, փաստացի անազատության մեջ գտնվելու ժամկետը, մեղմացնում է նշանակված պատիժը կամ ազատում է պատիժը կրելուց:

5. Հանցանքը կատարելուց հետո հոգեկան առողջության խնդիրներ ի հայտ գալու հիմքով անձի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառելու ժամկետը սույն օրենսգրքով սահմանված կարգով հաշվակցվում է պատժի ժամկետին:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը.

Նախագծով կարգավորման ենթակա ոլորտը վերաբերում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ ՔԿՀ) խափանման միջոց կալանքի տակ գտնվող անձանց իրավունքների պաշտպանության և ազատազրկման ձևով պատիժ կրող անձանց իրավունքների հետ դրանց համաչափության ապահովման հարցերին:

Նախագծով առաջարկվում է փոփոխել ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 79-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը փաստացի անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածը նշանակված պատժի ժամկետում հաշվակցելու հարաբերակցությունը՝ կարճաժամկետ ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու և ազատազրկման ձևով նշանակված պատժի դեպքում մեկ օրը երկու օրվա դիմաց հաշվարկելու միջոցով:

2. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Գործող կարգավորման համաձայն՝ «Մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, անկախ Հայաստանի Հանրապետության իրավազորությունից, փաստացի անազատության մեջ գտնվելու ժամկետը հաշվակցվում է կարճաժամկետ ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու, ազատազրկման ձևով նշանակված պատժին՝ 1 օրը հաշվելով 1 օրվա դիմաց, (...):»

Այլ կերպ ասած, նախքան դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, անձի՝ խափանման միջոց կալանքի պայմաններում գտնվելու ժամանակահատվածը, ներկա կարգավորման պայմաններում, հավասարեցված է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա ազատազրկման՝ որպես պատժի պայմաններում գտնվելու ժամանակահատվածին՝ չնայած գործնականում առկա տարբերություններին:

Մասնավորապես, հարկ ենք համարում անդրադառնալ ազատազրկված և կալանավորված անձանց արտաքին աշխարհի հետ կապի միջազգայնորեն ամրագրված սկզբունքների իրագործմանը Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ 8-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի /այսուհետ՝ Եվրոպական դատարան կամ ՄԻԵԴ/ կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ կալանքը, ինչպես անձին ազատությունից զրկող ցանկացած այլ միջոց, ենթադրում է նրա անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ ներհատուկ սահմանափակումներ: Այնուամենայնիվ, կալանավորի՝ ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի էական մասն է կազմում այն, որ պետական մարմինները նրան հնարավորություն ընձեռեն

կամ, անհրաժեշտության դեպքում, աջակցեն՝ պահպանելու կապն իր մերձավոր ազգականների հետ:[1]

Անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքին ցանկացած միջամտություն պետք է հիմնավորված լինի Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով: Մասնավորապես, ցանկացած կարգավորում, որի հիման վրա սահմանափակվում են ընտանեկան տեսակցությունները, պետք է բավարարի 8-րդ հոդվածով նախատեսված՝ "quality of law" («օրենքի որակի») պահանջը: Ռուսաստանի դեմ հարուցված մի շարք գործերով Եվրոպական դատարանը արձանագրել է, որ այդ պահանջը չի պահպանվել, քանի որ օրենքը քրեական գործով վարույթն իրականացնող մարմնին տրամադրել է անսահմանափակ հայեցողություն՝ թույլատրելու կամ մերժելու բանտային տեսակցությունները, և չի նախատեսել որևէ մեխանիզմ՝ սահմանափակելու այդ հայեցողության շրջանակը կամ դրա իրականացման կարգը: Հետևաբար, Դատարանը գտել է, որ նման օրենքը զրկել է կալանավորին կամայականությունից կամ չարաշահումից պաշտպանվածության այն նվազագույն մակարդակից, որին քաղաքացիներն իրավունք ունեն ժողովրդավարական հասարակությունում՝ օրենքի գերակայության պայմաններում:[2]

Կուչերան ընդդեմ Սլովակիայի, 2007, §§ 127-134 գործը վերաբերում էր նախաքննության ընթացքում կալանավորված անձի ընտանիքի անդամների հետ հանդիպումների սահմանափակումներին: Դատարանը շեշտել է, որ, մինչդեռ առկա է եղել օրինական անհրաժեշտություն կանխելու դիմումատուի կողմից նախաքննությանը խոչընդոտելը, օրինակ՝ հանցակիցների, այդ թվում՝ կնոջ հետ, տեղեկություններ փոխանակելով, արդարացված չէ, որ անհրաժեշտ է եղել մերժել նրա տեսակցությունները կնոջ հետ տասներեք ամիս ժամկետով: Դատարանը շեշտել է, որ, օրինակ, հատուկ այցելությունները կարող էին իրականացվել պաշտոնատար անձի վերահսկողությամբ: Դա նույնպես վիճելի էր, թե արդյոք

[1] տե՛ս «Խորոշենկոն ընդդեմ Ռուսաստանի» գործը, 2015 թ., § 106 համապատասխան հղումներով
[2] տե՛ս Կունգուրովն ընդդեմ Ռուսաստանի, 2020 թ., §§ 18-20

համապատասխան և բավարար հիմքեր կային կանխելու դիմողի և իր կնոջ հանդիպումները այդքան երկար ժամանակով՝ հաշվի առնելով այդքան երկարաժամկետ բաժանման հետևանքով առաջացած տառապանքը և այն փաստը, որ նախաքննությունը գործնականում ավարտվել է: Այս հանգամանքներում Դատարանը հայտնաբերեց Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

Որպես կանոն, դատապարտյալների նամակագրությունն արտաքին աշխարհի հետ ևս պաշտպանված է Կոնվենցիայի 8-րդ հոդվածով: Դատարանը իր նախադեպային իրավունքում շեշտադրել է դատապարտյալների՝ նամակագրության վերահսկողության ցանկացած միջոցի կիրառման կամայականությունից պաշտպանվելու անհրաժեշտությունը: Մասնավորապես, Դատարանն ընդգծել է դատապարտյալների նամակագրության նկատմամբ վերահսկողության միջոցների տևողությունը, դրանք հիմնավորող պատճառները, ինչպես նաև այդ առնչությամբ իշխանություններին վերապահված հայեցողության իրականացման շրջանակն ու կարգը կանոնակարգելու անհրաժեշտությունը:[3] Ավելին, երբ ձեռնարկվում են դատապարտյալների նամակագրությանը խոչընդոտող միջոցներ, անհրաժեշտ է, որ միջամտությունը պատճառաբանվի, որպեսզի դիմումատուն համոզվի, որ օրենքը ճիշտ է կիրառվել իր նկատմամբ, և որ նրա գործով ընդունված որոշումները անհիմն կամ կամայական չեն:[4]

Ինչ վերաբերում է հեռախոսազանգերին, ապա 8-րդ հոդվածն ինքնին չի երաշխավորում նման իրավունք, հատկապես եթե առկա են գրավոր նամակագրության բավարար հնարավորություններ: Այնուամենայնիվ, եթե հեռախոսակապից օգտվելու հնարավորություն է տրամադրվում, ապա դրանք նույնպես կարող են սահմանափակումների ենթարկվել՝ հաշվի առնելով ազատազրկման սովորական և ողջամիտ պահանջները:[5] Սակայն նման ցանկացած

---

[3] տե՛ս Enea v. Italy [GC], 2009, § 143
[4] տե՛ս Onoufriou v. Cyprus, 2010, § 113
[5] տե՛ս A.B. v. the Netherlands, 2002, §§ 92-93; Davison v. the United Kingdom (dec.), 2010; Nusret Kaya and Others v. Turkey, 2014, § 36

սահմանափակում պետք է համապատասխանի 8-րդ հոդվածի երկրորդ պարբերության պահանջներին:

Եվրոպական բանտային կանոններով նախատեսված է, որ դատապարտյալներին պետք է թույլատրվի հնարավորինս հաճախ նամակագրության, հեռախոսային զանգի կամ կապի այլ ձևերով շփվել իրենց ընտանիքների, այլ անձանց և արտաքին կազմակերպությունների ներկայացուցիչների հետ և ստանալ տեսակցություններ այդ անձանցից:[6]

<< քրեակատարողական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝

1. Դատապարտյալն իրավունք ունի՝

8) արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ (տեսազանգեր), օգտվելու հեռախոսակապից, գրականությունից և զանգվածային լրատվության միջոցներից.

Նույն օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝

1. Կարճաժամկետ ազատազրկում կատարող քրեակատարողական հիմնարկում նախատեսվում են տեսակցության սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, զանգվածային լրատվության միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ՝ ընտանիքի և արտաքին աշխարհի հետ դատապարտյալի կապն ապահովելու համար:

2. Դատապարտյալը պատժի ընթացքում ունի առնվազն մեկ կարճատև՝ մինչև չորս ժամ տևողությամբ տեսակցության իրավունք, որը տրամադրվում է միայն մերձավոր ազգականների հետ:

3. Անչափահաս դատապարտյալին տրամադրվում է ամսվա ընթացքում առնվազն երկու կարճատև տեսակցություն՝ մինչև չորս ժամ տևողությամբ, ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ:

---

[6] տե՛ս European Prison Rules, Council of Europe Publishing, RecommendationRec(2006)2 of the Committee of Ministers to member states on the European Prison Rules կետ 24.1

4. Դատապարտյալի խնդրանքով կարճատև տեսակցությունը կարող է փոխարինվել հեռախոսակապից կամ տեսազանգից օգտվելով:

5. Դատապարտյալին տրվում է մեկ ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ հեռախոսակապից և մեկ անգամ տեսազանգից օգտվելու իրավունք:

6. Բացառիկ հանգամանքների դեպքում՝ մերձավոր ազգականի մահ կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդություն, արտակարգ իրավիճակ, որը զգալի նյութական վնաս է պատճառել դատապարտյալին կամ նրա ընտանիքին, ինչպես նաև իր երեխային պետական կամ այլ հաստատությունում կամ ազգականի մոտ տեղավորելու նպատակով կարող է տրամադրվել լրացուցիչ կարճատև տեսակցություն կամ հեռախոսակապից օգտվելու հնարավորություն կամ կարճատև մեկնում՝ մինչև երեք օր ժամկետով՝ չհաշված մեկնելու և վերադառնալու համար անհրաժեշտ ժամանակը, որը չի կարող գերազանցել երկու օրը: Քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս գտնվելու ժամանակը հաշվարկվում է պատժի ժամկետի մեջ:

7. Դատապարտյալին թույլատրվում է իր հաշվին վարել նամակագրություն, որի գաղտնիությունը երաշխավորում ու պահպանում է քրեակատարողական հիմնարկը: Նամակագրությունն իրականացվում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջոցով՝ առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու, ենթակա է արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով:

8. Տեսակցության տրամադրման, հեռախոսակապից և տեսազանգից օգտվելու, նամակագրության վարման կարգը և պայմանները սահմանվում են քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգով:

Նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի համաձայն՝

1. Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը ստեղծում է համապատասխան պայմաններ՝ ընտանիքի և արտաքին աշխարհի հետ դատապարտյալի կապն ապահովելու նպատակով: Այդ նպատակով

քրեակատարողական հիմնարկում ստեղծվում են կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ:

2. Դատապարտյալին քրեակատարողական հիմնարկի տարածքում տրվում են տեսակցություններ. կարճատև՝ մինչև չորս ժամ տևողությամբ, և երկարատև՝ մինչև երեք օր տևողությամբ: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դատապարտյալներին կարող է տրվել հինգ օր տևողությամբ երկարատև տեսակցություն՝ քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս բնակվելու իրավունքով: Այս տեսակցության անցկացման կարգը սահմանվում է քրեակատարողական հիմնարկի կանոնակարգով՝ ելնելով դատապարտյալի նկատմամբ պատշաճ հսկողություն իրականացնելու անհրաժեշտությունից: Տրամադրվող տեսակցությունների տեսակը և քանակը սահմանվում են սույն օրենսգրքով:

3. Կարճատև տեսակցություններ տրամադրվում են մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ՝ քրեակատարողական հիմնարկի ներկայացուցչի տեսողական հսկողությամբ: Երկարատև տեսակցություններ տրամադրվում են միայն մերձավոր ազգականների կամ այն անձանց հետ, ում հետ դատապարտյալն ունի համատեղ երեխա:

4. Դատապարտյալի ցանկությամբ երկարատև մեկ տեսակցությունը կարող է փոխարինվել կարճատև մեկ տեսակցությամբ, իսկ կարճատև մեկ տեսակցությունը՝ մեկ հեռախոսակապով կամ տեսազանգով:

5. Դատապարտյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար իր գրավոր դիմումի հիման վրա տրվում են տեսակցություններ փաստաբանի հետ՝ առանց քանակի և տևողության սահմանափակման, այդ թվում՝ առցանց տարբերակով: Փաստաբանի հետ դատապարտյալի տեսակցությունները տեղի են ունենում խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ):

6. Դատապարտյալը, որի երեխան խնամվում և դաստիարակվում է պետական կամ այլ հաստատությունում, երկու ամիսն առնվազն մեկ կարճատև և

վեց ամիսն առնվազն մեկ երկարատև տեսակցության իրավունք ունի իր երեխայի հետ: Այս տեսակցությունների առավելագույն քանակը որոշում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմը՝ հաշվի առնելով դատապարտյալի բնութագիրը, նրա վարքագիծը, կապը երեխայի հետ և ազդեցությունը նրա վրա, ինչպես նաև երեխայի լավագույն շահը:

7. Դատապարտյալի և պետական կամ այլ հաստատություններում խնամվող և դաստիարակվող՝ նրա երեխայի միջև տեսակցություններն իրականացվում են քրեակատարողական հիմնարկի և այն պետական կամ այլ հաստատությունում կամ այլ հաստատության կողմից համատեղ, որտեղ խնամվում և դաստիարակվում է երեխան: Տեսակցության ծախսերը կատարվում են այն քրեակատարողական հիմնարկի հաշվին, որտեղ պատիժ է կրում դատապարտյալը, եթե դատապարտյալի անձնական հաշվին պահանջվող գումարը բացակայում է:

8. Պետական կամ այլ հաստատություններում խնամվող և դաստիարակվող երեխայի հետ տեսակցությունից առաջ, անհրաժեշտության դեպքում, դատապարտյալի և նրա երեխայի հետ իրականացվում է նախապատրաստական աշխատանք սոցիալական աշխատողի, հոգեբանի կամ մանկավարժի կողմից:

Նույն օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատապարտյալին թույլատրվում է սեփական միջոցների հաշվին վարել նամակագրություն՝ առանց նամակների և հեռագրերի թվի սահմանափակման:

2. Նամակագրությունն իրականացվում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջոցով: Նամակագրության գաղտնիությունը երաշխավորվում ու պահպանվում է քրեակատարողական հիմնարկի կողմից: Նամակը, առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու, ենթակա է արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով: Դատապարտյալի բացակայությամբ ստացված նամակներն ուղարկվում են նրա գտնվելու նոր վայր:

3. Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող և միմյանց ազգականներ չհանդիսացող դատապարտյալների միջև նամակագրությունն իրականացվում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի թույլտվությամբ:

4. Դատապարտյալներն իրավունք ունեն առանց սահմանափակման ստանալու և կատարելու դրամական փոխանցումներ, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

Նույն օրենսգրքի 83-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատապարտյալին քրեակատարողական հիմնարկի պետի սահմանած ժամանակացույցով տրամադրվում է հեռախոսակապից և տեսազանգից օգտվելու հնարավորություն՝ պետական միջոցների հաշվին: Հեռախոսակապից և տեսազանգից դատապարտյալը լրացուցիչ օգտվում է սեփական միջոցների հաշվին: Հեռախոսակապից կամ տեսազանգից օգտվելու տևողությունը յուրաքանչյուր դեպքում չի կարող գերազանցել 20 րոպեն, բացառիկ դեպքերում այն կարող է երկարաձգվել ևս 10 րոպեով:

2. Դատապարտյալն իր ցանկությամբ հեռախոսակապից և տեսազանգից լրացուցիչ օգտվելու իրավունք կարող է ստանալ քրեակատարողական հիմնարկ ընդունվելուց հետո, ինչպես նաև բացառիկ հանգամանքների դեպքում:

3. Կալանավորված անձանց և դատապարտյալների միջև հեռախոսակապն ու տեսազանգն արգելվում է:

4. Քրեակատարողական հիմնարկում հեռախոսակապը և տեսազանգը կարող են տեղի ունենալ քրեակատարողական հիմնարկի ներկայացուցչի տեսողական հսկողությամբ՝ բացառելով խոսակցությունը լսելը:

«Չերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝

(...)

Չերբակալված և կալանավորված անձանց տեսակցությունը օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, իսկ կալանավորված անձանց՝ նաև

զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, տրամադրվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետի որոշմամբ: Ձերբակալված օտարերկրյա քաղաքացուն և քաղաքացիություն չունեցող անձին տեսակցություն տրամադրվում է նաև վերջինիս քաղաքացիության կամ մշտական բնակության պետության իրավասու ներկայացուցչի հետ՝ Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում: Ձերբակալված անձանց չի տրամադրվում տեսակցություն զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

(...) Կալանավորված անձանց տեսակցությունը օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է սահմանափակվել միայն Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կայացված դատարանի որոշմամբ, որի մասին քրեական վարույթն իրականացնող մարմինը գրավոր իրազեկում է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին: Ձերբակալված օտարերկրյա քաղաքացուն և քաղաքացիություն չունեցող անձին տեսակցություն տրամադրվում է նաև վերջինիս քաղաքացիության կամ մշտական բնակության պետության իրավասու ներկայացուցչի հետ՝ Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում:

Մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ տեսակցությունն անցկացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի ծառայողների հսկողությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այդ անձանց կողմից ձերբակալված կամ կալանավորված անձանց արգելված առարկաներ, քրեական վարույթի իրականացումը խոչընդոտող կամ նոր հանցագործության կատարմանը նպաստող նյութեր, տեղեկություններ փոխանցելը

կամ փոխանցելու փորձը կարող է հանգեցնել տեսակցության վաղաժամկետ դադարեցման:

Ձերբակալված անձին մերձավոր ազգականների հետ տրամադրվում է առնվազն մեկ տեսակցություն՝ մինչև մեկ ժամ տևողությամբ:

Կալանավորված անձին մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ ամսվա ընթացքում տրամադրվում է առնվազն երկու կարճատև տեսակցություն՝ մինչև երեք ժամ տևողությամբ:

(...)

Միայն մերձավոր ազգականների հետ երկարատև տեսակցություն տրամադրվում է երկու ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև երեք օր տևողությամբ: Երկարատև տեսակցություն տրամադրվում է նաև կալանավորված անձի հետ ամուսնության մեջ չգտնվող այն անձի հետ, որի հետ կալանավորված անձն ունի համատեղ երեխա: Կալանավորված անձի խնդրանքով երկարատև տեսակցությունը կարող է փոխարինվել կարճատև տեսակցությամբ: Կարճատև և երկարատև տեսակցություններ տրամադրելու կարգը սահմանվում է ներքին կանոնակարգով:

Նույն օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝

(...)

Կալանավորված անձանց հեռախոսային խոսակցությունները կարող են սահմանափակվել միայն Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կայացված դատարանի որոշմամբ, որի մասին քրեական վարույթն իրականացնող մարմինը գրավոր իրազեկում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

Նամակագրությունն իրականացվում է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով և, առանց նամակագրության բովանդակությանը

ծանոթանալու, ենթակա է արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով:

Նամակագրության գրաքննություն կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Գրաքննությունը կատարում է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

Կալանավորված անձի նամակագրությունը կարող է սահմանափակվել միայն Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կայացված՝ դատարանի որոշմամբ, որի մասին քրեական վարույթն իրականացնող մարմինը գրավոր իրազեկում է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

(...)

Կալանավորված անձանց մերձավոր ազգականի մահվան կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդության, կալանավորված անձին կամ նրա ընտանիքին զգալի նյութական վնաս պատճառած տարերային աղետի դեպքում կարող են տրամադրվել կարճաժամկետ մեկնումներ:

Կալանավորված անչափահաս անձին կարճաժամկետ մեկնումներ տրամադրվում են միայն ազգականների կամ այլ անձանց ուղեկցությամբ:

Կարճաժամկետ մեկնումներ կարող են տրամադրվել մինչև յոթ օր տևողությամբ՝ չհաշված մեկնման և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը:

Կարճաժամկետ մեկնումներ տրամադրվում են քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

Կարճաժամկետ մեկնում տրամադրելու դիմումը քննարկվում է մեկ օրվա ընթացքում: Կարճաժամկետ մեկնման մեջ գտնվելու ժամանակը հաշվվում է կալանքի տակ պահելու ժամկետի մեջ:

Կարճաժամկետ մեկնման հետ կապված ծախսերը հոգում է կալանավորված անձը:

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական

հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 13 ապրիլի 2023 թվականի N 543-Ն որոշման /այսուհետ նաև՝ Ներքին կանոնակարգ/ 156-րդ կետի համաձայն՝

156. Կալանավորված անձանց տեսակցությունն օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կայացված դատարանի որոշմամբ:

Ներքին կանոնակարգի 179-րդ կետի համաձայն՝

179. Կալանավորված անձին կամ դատապարտյալին քրեակատարողական հիմնարկի պետի սահմանած ժամանակացույցով տրամադրվում է հեռախոսակապից և տեսազանգից օգտվելու հնարավորություն՝ ամսական մեկական հեռախոսակապ և տեսազանգ պետական միջոցների հաշվին: Հեռախոսակապից և տեսազանգից դատապարտյալը լրացուցիչ օգտվում է սեփական միջոցների հաշվին: Կալանավորված անձին հեռախոսակապից օգտվելու հնարավորություն տրամադրվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից արգելանքի բացակայության դեպքում, բացառությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ կամ «Թեժ գիծ» հեռախոսահամարներին զանգելու դեպքերի, որոնք չեն հաշվարկվում սահմանված հեռախոսազանգերի թվի մեջ:

Այսպիսով, ստացվում է, որ կալանավորված անձանց տեսակցությունը և հեռախոսակապից օգտվելու հնարավորությունը քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կարող է սահմանափակվել, այդ թվում՝ արգելվել, որը անհամաչափ վատթարացնում է կալանավորի դրությունը ազատազրկված անձանց նկատմամբ: Անձնական, ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի տեսանկյունից

շոշափվում են նաև կալանավորված անձի ընտանիքի անդամների, այդ թվում՝ անչափահաս զավակների իրավունքները:

Հատկանշական է նաև, որ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն /այսուհետ՝ ԽԿԿ/ 2023 թվականին Հայաստան կատարած այցի արդյունքում կոչ է արել Հայաստանի իշխանություններին փոփոխություններ կատարել համապատասխան օրենսդրության մեջ՝ ապահովելու համար, որ բոլոր կատեգորիաների բանտարկյալները, անկախ նշանակված պատժից կամ անվտանգային գոտուց, շաբաթական առնվազն մեկ ժամին համարժեք տևողությամբ տեսակցության իրավունք ունենան. նախընտրելի է, որ նրանք յուրաքանչյուր շաբաթ տեսակցության հնարավորություն ունենան: Պետք է նաև առկա լինի տեսակցությունների այն ժամանակահատվածները կուտակելու հնարավորություն, երբ նրանք տեսակցություն չեն ունեցել:[7] ԽԿԿ-ն առաջարկում է նաև, որ Հայաստանի իշխանությունները դիտարկեն բանտարկյալների համար հեռախոսակապն ավելի մատչելի դարձնելու եղանակները:[8]

Ներքին կանոնակարգի 193-րդ և 194-րդ կետերի համաձայն՝

193. Կալանավորված անձին «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքով նախատեսված մեկնում տրամադրվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, որի մասին վարույթ իրականացնող մարմինն անհապաղ գրավոր հայտնում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմին և կալանավորված անձին:

---

[7] տե՛ս Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 12 to 22 September 2023, պարբ. 64, տե՛ս նաև Եվրոպական բանտային կանոնների 24.1-24.8-րդ և 99-րդ կանոնները,

[8] տե՛ս Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 12 to 22 September 2023, պարբ. 65,

194. Դատապարտյալներին կարճատև և երկարատև մեկնումներ տրամադրվում են քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ: Քրեակատարողական հիմնարկի պետն իր որոշման մասին անհապաղ գրավոր հայտնում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային ստորաբաժանմանը՝ ըստ դատապարտյալի փաստացի մեկնման, հաշվառման կամ նախկին բնակության վայրի:

Ինչպես նկատում ենք՝ կրկին առկա է տարբերակված մոտեցում կալանավորված անձանց և դատապարտյալների՝ այս դեպքում մեկնումների տրամադրման կարգերի միջև, որում նվազ բարենպաստ իրավիճակում հայտնված են կալանավորված անձինք, քանի որ վերջիններիս մեկնման իրավունքի իրացումը կրկին պայմանավորված է վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

Անդրադառնալով քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց հանգստի, մասնավորապես՝ զբոսանքի իրավունքին, ցանկանում ենք ընդգծել առկա տարբերությունները կապված դատապարտյալներին և կալանավորներին հատկացվող զբոսանքի ժամանակահատվածների հետ:

<u><< քրեակատարողական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն</u>՝

1. Դատապարտյալն իրավունք ունի՝

6) հանգստի, այդ թվում՝ բացօթյա զբոսանքի, մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի.

<u>«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 13-րդ հոդվածի համաձայն</u>՝

Ձերբակալված կամ կալանավորված անձը, բացի Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավունքներից, նաև իրավունք ունի՝

10) հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի իրավունքը, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել

դատավարական կամ այլ գործողությունների, բացառությամբ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի.

Ըստ էության նկատում ենք, որ օրենսդիրը երաշխավորում է դատապարտյալների և կալանավորված անձանց զբոսանքի իրավունքը հավասարապես, սակայն այն էականորեն տարբերվում է, քանի որ վերջիններիս հատկացվում են զբոսանքի տարբեր տևողությամբ ժամանակահատվածներ: Մասնավորապես.

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 43-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

5. Դատապարտյալն օգտվում է առնվազն մեկ ժամ, իսկ անչափահաս դատապարտյալը՝ առնվազն երկու ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքի իրավունքից:

Նույն օրենսգրքի 78-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝

6. Առանձին պահվելու դեպքում դատապարտյալը նվազագույնն իրավունք ունի՝

2) ամենօրյա մեկ ժամ զբոսանքի և մարմնամարզության.

Նույն օրենսգրքի 79-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝

6. Դատապարտյալին տրամադրվում է ամենօրյա ոչ պակաս, քան մեկ ժամ, իսկ հղի, մինչև երեք տարեկան երեխա ունեցող կամ անչափահաս դատապարտյալներին՝ ոչ պակաս, քան երկու ժամ տևողությամբ զբոսանք, որը կազմակերպվում է ցերեկային ժամերին՝ դրա համար նախատեսված բացօթյա տարածքում: Դատապարտյալի զբոսանքի տևողությունը սահմանվում է սույն օրենսգրքով՝ հաշվի առնելով անվտանգային գոտու տեսակը: Դատապարտյալների կողմից քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնները խախտելու դեպքում զբոսանքը կարող է ժամկետից շուտ դադարեցվել:

Նույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

4. Ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում դատապարտյալը կարող է տեղաշարժվել գիշերային ժամերին՝ քրեակատարողական հիմնարկի՝ այդ

նպատակով նախատեսված տարածքի սահմաններում, իսկ ցերեկային ժամերին՝ քրեակատարողական հիմնարկի տարածքի սահմաններում, և քրեակատարողական հիմնարկի պետի թույլտվությամբ՝ դրանից դուրս:

5. Ցածր անվտանգային գոտու խիստ պայմաններում դատապարտյալը կարող է տեղաշարժվել ցերեկային ժամերին՝ քրեակատարողական հիմնարկի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում:

Նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

4. Միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում դատապարտյալը կարող է տեղաշարժվել ցերեկային ժամերին քրեակատարողական հիմնարկի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում:

5. Միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում դատապարտյալը կարող է տեղաշարժվել առնվազն երեք ժամ ցերեկային որոշակի ժամերի քրեակատարողական հիմնարկի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում:

Նույն օրենսգրքի 97-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

4. Բարձր անվտանգային գոտու մեղմ պայմաններում դատապարտյալն ամենօրյա երկու ժամ տևողությամբ զբոսանքի իրավունք ունի:

5. Բարձր անվտանգային գոտու խիստ պայմաններում դատապարտյալն ամենօրյա մեկ ժամ տևողությամբ զբոսանքի իրավունք ունի:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝

Ձերբակալված և կալանավորված անձանց զբոսանքը կազմակերպվում է ցերեկային ժամերին՝ դրա համար նախատեսված տարածքում:

Ձերբակալված և կալանավորված անձանց զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրական մեկ ժամից:

Նույն օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

Պատժախցում պահվող կալանավորված անձինք օգտվում են ամենօրյա՝ առնվազն մեկ ժամ տևողությամբ զբոսանքի իրավունքից:

Ներքին կանոնակարգի 49-րդ և 247-րդ կետերի համաձայն՝

49. Կալանավորված անձը կամ քրեակատարողական հիմնարկի բարձր անվտանգային գոտում և միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժը կրող դատապարտյալի զբոսանքի ժամերը սահմանվում են օրվա կարգացուցակով՝ ըստ քրեակատարողական հիմնարկի պետի կողմից հաստատված ժամանակացույցի:

247. Պատժախցում պահվող կալանավորված անձը կամ դատապարտյալն օգտվում է ամենօրյա՝ մեկ ժամ տևողությամբ զբոսանքի իրավունքից:

Ստացվում է, որ ցածր անվտանգային գոտում և միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում պահվող դատապարտյալներն ունեն քրեակատարողական հիմնարկի տարածքում կամ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում ազատ տեղաշարժելու իրավունք: Ուշագրավ է, որ Ներքին կանոնակարգում անմեղության կանխավարկածի շեմը չհաղթահարած կալանավորված անձինք զբոսանքի իրավունքի համատեքստում հավասարեցված են բարձր անվտանգային գոտում և միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժը կրող դատապարտյալներին:

Այսինքն, ցածր անվտանգային գոտում և միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժը կրող դատապարտյալներին հատկացված է անհամեմատ ավելի շատ ժամանակահատված՝ զբոսանքի իրավունքը իրացնելու նպատակով:

Հատկանշական է նաև, որ և՛ Եվրոպական բանտային կանոններով (տե՛ս կետ 18.6), և՛ Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափանիշներով (տե՛ս կետ 9.1) նախատեսված է, որ յուրաքանչյուր դատապարտյալ պետք է ունենա առանձին սենյակ կամ խուց, և միայն հատուկ դեպքերում պետք է մի սենյակը հատկացվի մեկից ավելի դատապարտյալների:

Հայաստանի Հանրապետության ՔԿՀ-ներում այս պահանջի պահպանումը գրեթե չի ապահովվում, որի հետևանքով առաջ է գալիս գերբնակեցման խնդիր, որը քանիցս արձանագրվել է թե՛ ներպետական, թե՛ միջազգային մարմինների կողմից: Հետաքրքիր է նաև միջազգային փորձը և վերջինիս կապակցությամբ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված պրակտիկան:

Թորեջանին և այլք ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ նախնական կալանքի կիրառումը և դրա տևողությունը պետք է հասցվեն նվազագույնի՝ հավատարիմ մնալով արդարադատության շահերին: ԵԽ-ի անդամ երկրները պետք է այդ նպատակով համոզված լինեն, որ իրենց օրենսդրությունը և դատաիրավական պրակտիկան համապատասխանում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցայի համապատասխան դրույթներին, ինչպես նաև իր վերահսկման մարմինների գործելակերպի սկզբունքներին և ուղղորդվեն № R(80)11 Հանձնարարականի սկզբնադրույթներով, որոնք վերաբերում են, մասնավորապես, անձին նախնական կալանքի տակ վերցնելու դրդապատճառներին:

Անհրաժեշտ է հնարավորինս կիրառել նախնական կալանքի այլընտրանքային միջոցներ, որպիսիք են կասկածյալին հատուկ հասցեով բնակվելու, ինչպես նաև առանց թույլտվության որոշակի վայրից բացակայելու կամ որոշակի վայր մեկնելու պարտավորությունները, գրավի դիմաց ազատ արձակելը դատական իշխանության առաջարկով որևէ մարմնի կողմից վերահսկումը: Այդ առիթով, պետք է քննության առնել այն միջոցները, որոնք կարող են թույլ տալ էլեկտրոնային համակարգի օգնությամբ վերահսկել անձի որոշակի հասցեով բնակվելու պարտականությունը:

Անհրաժեշտ է համապատասխան ռեսուրսներ տրամադրել մարդկային արժանապատվությունը չնվաստացնող արդյունավետ նախնական կալանքի

կիրառումն ապահովելու համար, ինչպես նաև՝ մշակել ընթացակարգային և տեխնիկական բնույթի կառավարման համապատասխան միջոցներ:[9]

Դատարանը համարում է, որ ազատազրկման միջոցները սովորաբար ենթադրում են որոշ անհարմարություններ կալանավորի համար: Այդուհանդերձ, դատարանը հիշեցնում է, որ ազատազրկման փաստով կալանավորը չի կորցնում Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Հակառակը, որոշ դեպքերում, **կալանավորված անձը կարող է առավել կարիք ունենա պաշտպանության, քանի որ դառնում է ավելի խոցելի և գտնվում է Պետության պատասխանատվության ներքո:** Այդ համատեքստում, 3-րդ հոդվածը ազատազրկման վայրերի ղեկավարության վրա պոզիտիվ պարտավորություն է դնում, ըստ որի նա պետք է անի ամեն բան, համոզված լինելու համար, որ կալանավորը պահվում է մարդկային արժանապատվությանը համահունչ պայմաններում, որ պատժի կիրառման պայմանների պատճառով կալանավորը չի ընկնում ծանր հուսալքության մեջ կամ այնպիսի ուժգնության փորձության ենթարկվում, որը գերազանցում է կալանքին բնորոշ անխուսափելի տառապանքը, և որ նրա առողջությունը և ինքնազգացողությունը ապահովվում են համարժեք կերպով:[10]

Կալանքի պայմանների առնչությամբ դատարանը հաշվի է առնում վերջինիս բազմապատկվող (կումուլատիվ) էֆֆեկտը, ինչպես նաև դիմումատուի սպեցիֆիկ գանգատները:[11] Մասնավորապես, այն ժամանակը որի ընթացքում անձը պահվել է հիշյալ պայմաններում, կարևոր գործոն է հանդիսանում:[12]

Հատկանշական է, որ Թորեջանին և այլք ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Դատարանը չի կարող պարտադրել Պետություններին դրույթներ վերջիններիս պատժիչ քաղաքականության և

---

[9] տե՛ս case of Torreggiani and others v. Italy, 2013, §§ 11-13

[10] տե՛ս Կուդշան ընդդեմ Լեհաստանի, (ԳՍ) № 30210/96, § 94, ՄԻԵԴ, 2000 XI, Նորբերտ Սիկորսկին ընդդեմ Լեհաստանի վերոնշյալի § 131

[11] տե՛ս Դուգոզը ընդդեմ դատարանի № 40907/98, ՄԻԵԴ 2001 II

[12] տե՛ս Ալվերը ընդդեմ Էստոնիայի № 64812/01, 8 նոյեմբերի, 2005

քրեակատարողական ծառայության կազմակերպման վերաբերյալ: Այս գործընթացները վեր են հանում մի շարք իրավական և գործնական բարդ հարցեր, որոնք սկզբունքորեն դուրս են Դատարանի գործառույթից:

Այդուհանդերձ, Դատարանը այս համատեքստում ցանկանում է հիշեցնել Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի առաջարկությունները, որոնցում կոչ է արվում Պետություններին խրախուսել դատախազներին և դատավորներին **հնարավորինս շատ դիմել այլընտրանքային պատժամիջոցների և պատժիչ քաղաքականության մեջ նվազագույն չափով կիրառել կալանքը, ինչը կնպաստի բանտային գերբեռնվածության խնդրի լուծմանը** *(տե՛ս մասնավորապես Նախարարների կոմիտեի առաջարկություն (99)22) և (2006)13):*

Այսպիսով, Թորեջանին և այլք ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի կողմից կայացված որոշման արդյունքում Իտալիայի Հանրապետությունը որդեգրեց կալանքի և պատժի հաշվակցման այլընտրանքային մեխանիզմ, որը դատարաններին տալիս է հայեցողություն փոխելու պատժի հաշվարկման կարգը՝ հաշվի առնելով կալանքի կրման պայմանները: Որոշակի մեխանիզմ նախատեսված է նաև Իսպանիայի Թագավորության օրենսդրությամբ:

Հատկանշական է նաև, որ պատժի հաշվակցման այլընտրանքային մեխանիզմ նախատեսում է նաև Կանադան՝ կալանքի 1 օրը հաշվարկելով ազատազրկման ձևով պատժի 1,5 օրվա դիմաց, եթե հանգամանքները արդարացնում են այդպիսի մոտեցումը: Համանման կարգավորումներ նախատեսված են նաև Ռուսաստանի Դաշնության և Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությամբ, որոնք ուղղակիորեն նախատեսում են սույն նախագծով առաջարկվող 1:2 հարաբերակցության մոդելը:

Վերոնշյալ օրինակները ցույց են տալիս, որ փաստացի անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածի հաշվակցման հարցում օրենսդրական լուծումները միատեսակ չեն, և առանձին պետություններում կիրառվում է նաև 1:2 հարաբերակցությունը:

ԽԿԿ-ն բարձրացրել է նաև գերբնակեցման խնդիր Հայաստան կատարած իր այցելությունների արդյունքում: 2023թ.-ին Հայաստան կատարած այցի արդյունքում ԽԿԿ-ն արձանագրել է դրական փոփոխություն, որը կապված էր նաև ՀՀ նոր Քրեական, Քրեական դատավարության (այսուհետ՝ ՔԴՕ) և Քրեակատարողական օրենսգրքերի ընդունման հետ: Մասնավորապես, նոր ՔԴՕ-ով կալանք խափանման միջոցին ավելացվել են նաև այլընտրանքային խափանման միջոցներ տնային կալանքը և վարչական հսկողությունը, որոնց ներդրումը ի սկզբանե նպատակ է ունեցել լուծելու ՔԿՀ-ների գերբնակեցման հարցը: Այս փոփոխության իրականացումը կատարվել է ԽԿԿ-ի առաջարկով 2019թ.-ին Հայաստան կատարված այցի շրջանակներում[13]: 2019թ-ի զեկույցում արձանագրվել են հետևյալ տվյալները. *քրեակատարողական հիմնարկների համակարգի տարողունակությունը կազմել է 5346 մարդ, իսկ քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց թիվը՝ 2225, ներառյալ՝ 1025 կալանավորված անձի:* 2023թ.-ի զեկույցում ԽԿԿ-ն արձանագրել է, որ ՀՀ ՔԿՀ-ներում պահվում է *2400 դատապարտյալ, որոնցից 1300-ը՝ կալանավոր, իսկ քրեակատարողական համակարգի ընդհանուր տարողունակությունը կազմում էր 4,491 անձ:*[14]

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2025 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրվել է, որ տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում Արդարադատության նախարարությունից ստացված տվյալների համաձայն՝ *2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվում է 2854 ազատազրկված անձ, որից 1424-ը կալանավորված անձինք են, այսինքն՝*

---

[13] տե՛ս Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 2 to 12 December 2019, պարբ. 26

[14] տե՛ս Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 12 to 22 September 2023, պարբ. 26

*ազատությունից զրկված անձանց **49.89%-ը:*** Այս ցուցանիշը կարելի է համարել դրական միտում այն համատեքստում, որ, օրինակ՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվելիս է եղել 2686 ազատազրկված անձ, որից 1401-ը (52.15%) եղել են կալանավորված անձինք, իսկ 2023 թվականին կալանավորված անձինք կազմել են քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց 53.29%-ը:

Այդուհանդերձ, վերը նշված ցուցանիշն էականորեն բարձր է այլ պետությունների հետ համեմատությամբ: Մասնավորապես, Համաշխարհային բանտային ամփոփագրում առկա տվյալների համաձայն՝ օրինակ՝ *Վրաստանի Հանրապետությունում 2025 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում ընդհանուր պահվող անձանցից միայն 23.2%-ն են կալանավորված անձինք, իսկ Թուրքիայի Հանրապետությունում 2026 թվականի հունվարի 2-ի դրությամբ՝ 15,9%-ը:*[15]

Ինչպես նկատում ենք՝ վերոնշյալ հաղորդմամբ Մարդու իրավունքների պաշտպանն իր մտահոգությունն է արտահայտել ՔԿՀ-ներում տիրող գերբնակեցման խնդրի վերաբերյալ՝ արձանագրելով, որ, չնայած այն հանգամանքին, որ կալանավորված անձանց ցուցանիշը նվազում է, միևնույն է այդ ցուցանիշը *<u>մնում է՝ համեմատած հարևան երկրների գրանցած ցուցանիշի</u>*:

Հավելենք նաև, որ մտահոգված լինելով ՔԿՀ-ներում տիրող իրավիճակով՝ սույն թվականի սեպտեմբերի 11-ին հարցում ենք իրականացրել ուղղված Արդարադատության նախարար տիկին Սրբուհի Գալյանին՝ քրեակատարողական հիմնարկներում ընդհանուր պահվող անձանց վերաբերյալ առավել թարմ տեղեկատվություն ստանալու նպատակով, որին ի պատասխան մեզ հայտնեցին, որ *2026 թվականի սեպտեմբերի 11-ի դրությամբ Արդարադատության նախարարության*

[15] տե՛ս Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում 2025, էջ 198

քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց թվաքանակը կազմել է 1429, իսկ դատապարտյալների թվաքանակը՝ 1704:

ԽԿԿ-ն 2023 թվականին Հայաստան կատարած իր այցելության արդյունքում արձանագրել է նաև, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պայմանները դեռևս ընդհանուր առմամբ բավականին վատ էին (բացառությամբ վերջերս հիմնանորոգված խոհանոցի, երկրորդ հարկում գտնվող որոշ ընդհանուր օգտագործման սանհանգույցների և լոգասենյակների, հիմնական կացարանային բլոկի երկրորդ և երրորդ հարկերում գտնվող մի քանի վերանորոգված խցերի և արտահերթ վերանորոգված ջրամատակարարման և ջրահեռացման կայանների), անընդունելի հիմնական կացարանային շենքի առաջին հարկում գտնվող ծայրաստիճան ավերված խցերում (օգտագործվել են, ի թիվս այլնի, որպես կարգապահական խցեր և իրենց իսկ անվտանգության և մյուս բանտարկյալների ապահովության համար առանձնացված բանտարկյալներին պահելու համար), 6-րդ մասնաշենքում, որը ևս հիմնականում օգտագործվել է այն բանտարկյալներին պահելու համար, որոնց մյուսներից առանձին պահելը (սակայն ոչ մեկուսացնելը) համարվել է անհրաժեշտություն: Ավելին, հիմնարկի տնօրենի հաստատմամբ 6-րդ մասնաշենքը բանտարկյալների պահման մնացած մասի հետ կապող՝ մուտքային անցուղիների և միջանցքների նախագիծը և ֆիզիկական վիճակը կարող էին սկզբունքորեն վտանգավոր լինել հրդեհի կամ արագ տարհանում պահանջող այլ արտակարգ իրավիճակի դեպքում:[16]

«Կարցերի» խցերի պայմանները տատանվում էին շատ վատից («Արմավիր» քրեակատարողական հիմնարկ) մինչև բացարձակապես անընդունելին՝ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: Կոմիտեն առաջարկում է քայլեր ձեռնարկել՝ բարելավելու «Արմավիր» և

[16] տե՛ս Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 12 to 22 September 2023, պարբ. 33

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկների «կարցերի» խցերի պայմանները:[17]

Վերոնշյալի հաշվառմամբ ԽԿԿ-ն կոչ է արել Հայաստանի իշխանություններին առաջնահերթության կարգով ձեռնամուխ լինել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ծրագրված փակմանը և «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի համապարփակ հիմնանորոգմանը (ըստ հաղորդման, նախատեսվում է իրականացնել 2024 թվականին), որը պետք է նաեւ ներառի կալանքի տակ գտնվող անձանց կողմից զբոսանքի համար օգտագործվող բակերի ընդարձակումը և վերակառուցումը՝ պատշաճ ֆիզիկական շարժունությունն ապահովելու համար:[18]

ԽԿԿ-ի հետևյալ կոչի մասին Ազգային ժողովի հերթական նիստի հարցուպատասխան փուլի շրջանակներում խոսեց ԱԺ իններորդ գումարման պատգամավոր Լիաննա Գասպարյանը և արձանագրեց, որ վերոնշյալ քրեակատարողական հիմնարկներում բարեկարգման աշխատանքներ չեն իրականացվել, որի վերաբերյալ հարց ուղղեց Արդարադատության նախարար տիկին Սրբուհի Գալյանին:

Հարցին ի պատասխան տիկին Գալյանը նշեց. *«այն որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը ենթակա է փակման, նորություն չէ մեզ համար, մենք ենք ասել դա և նման հանձնառություն ենք սրանձնել, այդ մասին նշել ենք նաև Կառավարության միջոցառումների ծրագրում և մենք արդեն երկու տարի է խոսում ենք նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման մասին, որը գալու է փոխարինելու «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկին և հենց այսօր փոխվարչապետի գլխավորությամբ մենք, կարելի է ասել, վերջնականացրել ենք*

---

[17] տե՛ս Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 12 to 22 September 2023, պարբ. 62

[18] տե՛ս Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 12 to 22 September 2023, պարբ. 34

քննարկումները, թե ինչ եղանակով ենք կառուցելու նոր քրեակատարողական հիմնարկը և առաջիկայում ըստ էության դուք ականատես կլինեք արդեն հողի վրա ձեռնարկվող քայլերին»:

Եվրոպական բանտային կանոնների (Recommendation Rec(2006)2-rev of the Committee of Ministers to member States on the European Prison Rules) 18.8 կետով և Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափանիշների (Նելսոն Մանդելայի կանոններ) 8-րդ կետով նախատեսվում է նաև որոշ կատեգորիայի դատապարտյալներին միմյանցից անջատ պահելու կարևորությունը, ինչպես օրինակ չդատապարտվածներին՝ դատապարտվածներից: Չդատապարտվածներին դատապարտվածներից անջատ պահելը առաջին հերթին կարևոր երաշխիք է անմեղության կանխավարկածի ապահովման տեսանկյունից. անձը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Հետևաբար այս բաժանումն անշուշտ անհրաժեշտ է ավելի խոցելի կատեգորիայի դատապարտյալներին պաշտպանելու նպատակով:

Եվրոպական բանտային կանոնների 95.1 կետը նախատեսվում է, որ կալանավորների նկատմամբ կիրառվող ռեժիմը չպետք է պայմանավորված լինի այն հավանականությամբ, որ նրանք ապագայում կարող են մեղավոր ճանաչվել քրեական հանցագործության կատարման մեջ: Այս կարգավորումը ևս միտված է անմեղության կանխավարկածի պահպանմանը:

Ինչպես գիտենք, Հայաստանի Հանրապետությունում դատապարտված անձանց չդատապարտված անձանցից անջատ բնակեցնելու պայմանի ապահովման կարգավորումը ևս անտեսված է, ինչը առաջացնում է նվազ բարենպաստ վիճակ կալանավորված անձանց համար: Կալանավորված անձանց դատապարտված անձանցից առանձին պահելը չպետք է մեկնաբանել որպես կալանավորված անձանց տրված «արտոնություն», այլ որպես նրանց՝ դատապարտված չլինելու իրավական կարգավիճակից բխող անհրաժեշտ երաշխիք:

Վերոգրյալը մատնանշում է, որ կալանավորված և դատապարտված անձանց պահման պայմանների և արտաքին աշխարհի հետ կապի հնարավորությունների միջև առկա տարբերությունները կարող են որոշ դեպքերում հանգեցնել կալանքի՝ փաստացի ավելի խիստ ընկալման կամ ազդեցության: Այդ հանգամանքը կարևոր է գնահատել՝ միաժամանակ նկատի ունենալով, որ կալանքը խափանման միջոց է, ոչ թե պատիժ, իսկ դրա սահմանափակումները պետք է կապված լինեն օրինական դատավարական նպատակների հետ և չգերազանցեն դրանց հասնելու համար անհրաժեշտ միջոցները:

3. Առկա խնդիրներին առաջարկվող լուծումները, կարգավորման նպատակը, ակնկալվող արդյունքները.

Ինչպես ներկայացվեց վերոշարադրյալում, ՀՀ քրեակատարողական հիմնարկներում ձևավորված և կիրառվող պրակտիկան հանգեցրել է մի շարք խնդրահարույց իրավիճակների, այդ թվում՝ կալանավորված և ազատազրկման ձևով պատիժ կրող անձանց իրավական կարգավիճակների և նրանց նկատմամբ կիրառվող սահմանափակումների միջև էական տարբերակման:

Մասնավորապես, արտաքին աշխարհի հետ կալանավորված անձանց հաղորդակցության իրավունքը ենթարկվում է առավել խիստ սահմանափակումների, ընդ որում՝ առանձին դեպքերում համապատասխան հաղորդակցության միջոցների կիրառումը կարող է սահմանափակվել կամ արգելվել՝ նախաքննությանը խոչընդոտելու, քրեական վարույթի մասնակիցների վրա ազդեցություն գործադրելու կամ այլ դատավարական ռիսկեր կանխելու անհրաժեշտությամբ:

Միաժամանակ, տեսակցությունների, հեռախոսային հաղորդակցության և նամակագրության նկատմամբ կիրառվող լրացուցիչ սահմանափակումները, որոնք իրենց բնույթով և ծավալով համարժեք կերպով չեն կիրառվում կալանավորված անձանց նկատմամբ, գործնականում կարող են հանգեցնել այնպիսի իրավիճակի,

երբ կալանքի պայմանները որոշակի առումներով դառնում են առավել խիստ, քան ազատազրկման ձևով պատիժ կրելու պայմանները:

Լրացուցիչ սահմանափակումներ կիրառվում են նաև կալանավորված անձանց զբոսանքի իրավունքի իրացման շրջանակներում: Կալանավորված անձինք օգտվում են զբոսանքի իրավունքի նվազագույն շեմից, որը հատկացված է քրեակատարողական հիմնարկի բարձր անվտանգային գոտում և միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժը կրող դատապարտյալներին, այնինչ կալանավորված անձանց պարագայում դեռևս չի հաղթահարվել անմեղության կանկավարկածի շեմը, և վերջիններս համարվում են անմեղ, քանի դեռ նրանց մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Նման վերաբերմունքը կալանավորված անձանց նկատմամբ հանգեցնում է այնպիսի իրավիճակի, որ խափանման միջոց կալանքի պայմանները փաստացի դառնում են ավելի խիստ, քան ազատազրկման ձևով պատիժը կրելու պայմաններն են:

Նույն խնդրահարույց անհամաչափությունը դրսևորվում է նաև պահման պայմանների համատեքստում: Մասնավորապես, կալանավորված և դատապարտված անձանց պատշաճ տարանջատման, ինչպես նաև նրանց պահման պայմանների վերաբերյալ միջազգային չափորոշիչների լիարժեք ապահովման առումով առկա խնդիրները կարող են հանգեցնել կալանավորված անձանց նկատմամբ այնպիսի սահմանափակումների կիրառման, որոնք իրենց բնույթով դուրս են գալիս բացառապես խափանման միջոցի նպատակներից և կարող են անհամատեղելի լինել անմեղության կանխավարկածի պահանջների հետ:

Հետևաբար, վերոգրյալ հանգամանքների համակցության արդյունքում ձևավորվում է իրավիճակ, երբ խափանման միջոց կալանքի պայմաններում գտնվող անձանց նկատմամբ կիրառվող սահմանափակումների ամբողջությունը որոշակի դեպքերում կարող է իր ինտենսիվությամբ գերազանցել դատապարտված անձանց նկատմամբ կիրառվող սահմանափակումների շրջանակը: Մինչդեռ կալանքը,

ունենալով բացառապես խափանման միջոցի բնույթ, չի հետապնդում պատժի նպատակ և չի կարող իր փաստացի պայմաններով վերածվել պատժի բնույթ ունեցող միջոցի:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ ներկայացվող նախագծի առանցքային նպատակներից է կալանավորված անձանց իրավական և փաստացի կարգավիճակի նկատմամբ կիրառվող սահմանափակումների պայմաններում ապահովել նրանց իրավունքների և ազատությունների առավել համաչափ և հավասարակշռված իրացումը:

Միաժամանակ, նախագծի իրավական նշանակությունը անհրաժեշտ է դիտարկել նաև համաներման ինստիտուտի համատեքստում:

ՀՀ քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 1. Ենթադրյալ հանցանք կատարած անձը համաներման մասին օրենքով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժով, կամ կարող է վերացվել դատվածությունը:

Հատկանշական է, որ ՀՀ-ում համաներման ինստիտուտի գործնական կիրառության տեսանկյունից 2018 թվականից ի վեր համաներման մասին օրենք չի ընդունվել, և, հետևաբար, այդ իրավական մեխանիզմը նշված ժամանակահատվածում չի կիրառվել:

Այս համատեքստում ներկայացվող նախագիծը, թեև իր իրավական բնույթով չի հանդիսանում համաներման մասին օրենք և չի կարող նույնացվել ՀՀ քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածով նախատեսված համաներման ինստիտուտի հետ, իր իրավական հետևանքներով կարող է որոշակի առումով ունենալ համաներման հետ համադրելի արդյունք:

Մասնավորապես, նախագծի ընդունման և դրա դրույթների կիրառման արդյունքում նախատեսվում է հնարավորություն՝ որոշակի դատապարտյալների

նկատմամբ կիրառվող պատժի ժամկետի կրճատման կամ պատժից լրիվ կամ մասնակի ազատման միջոցով մեղմելու նրանց նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության հետևանքները:

Այսպիսով, վերոշարադրյալի համակցված վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ նախագծի կիրառման արդյունքում ակնկալվում է դատապարտյալների նկատմամբ նշանակված պատժի մեղմացման կամ դրա չկրած մասից ազատման իրավական հետևանքներ՝ դրանով իսկ որոշակի չափով փոխհատուցելով այն անհամաչափությունը, որը ձևավորվել է կալանավորված և դատապարտված անձանց իրավական կարգավիճակների միջև՝ պահման պայմանների և արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու միջազգայնորեն ամրագրված սկզբունքների պատշաճ ապահովման տեսանկյունից:

4. Իրավական ակտի նախագիծը մշակող պատասխանատու մարմինը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, նախաձեռնողի, հեղինակների և մշակմանը մասնակցող անձանց մասին տեղեկություններ.

Նախագիծը մշակվել է Ազգային ժողովի պատգամավոր Արամ Վարդևանյանի կողմից:

5. Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության մասին.

Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չկա: